

Պայծառատես աչքը արծաթե քաղաքում

Տասներեք տարեկան էի, երբ առաջին անգամ հորս հետ այցելեցի ՆյուՅորք Սիթի: Մենք այնտեղ էինք գնում հորեղբորս՝ Քուինսին տեսնելու և ինձ համար Վերմերի մասին որևէ գիրք գնելու: Իմ և մորս նպատակը Վերմերի գիրքն էր, իսկ հորս՝ եղբորը Քուինսին տեսնելը: Մեկ սերունդ առաջ հորեղբայրս անհետացել էր Չիկագոյի ուղղությամբ ու, հավանաբար, դարձել հարուստ: Անցյալ շաբաթ, երբ նա գործով եկել էր արևելք, ես արդեն գերազանց գնահատականներով ավարտել էի ութերորդ դասարանը: Հայրս միշտ պնդում էր, որ ես ու հորեղբայրս իր երբևիցե ճանաչած ամենագործունյա մարդկանցից ենք: Նա մեզ անվանում էր «հար շտապողներ», իհարկե, որոշ ծաղրանքով, մինչև այն ժամանակ, երբ նրան ապացուցեցի, որ այդ բանում չի սխալվում: Հանկարծ հորս մեջ անդիմադրելի մի ցանկություն առաջացավ, որ ես ու հորեղբայրս հանդիպենք, գտնելով, որ դրա համար հասել է հարմար պահը: ՆյուՅորք գնալու համար պահանջվում էր յոթ դոլար, որովհետև այդ օրերին ամեն ինչ չափվում էր փողով՝ ժամանակը, տարածությունը: Երկրորդ համաշխարհային պատերազմը գրեթե ավարտվել էր, բայց մենք դեռ ապրում էինք նրա ազդեցության տակ: Ես ու հայրս ճանապարհ ընկանք դեպի ՆյուՅորք, ունենալով միայն հետադարձ տոմսեր ու հինգ դոլար: Հինգ դոլարը վերցրել էինք Վերմերի գիրքը գնելու համար:

Երկաթգծի կայարանում մեզ ճանապարհ դնելիս մայրս հանկարծակի գոչեց. «Ես ասում եմ Ավգուստիններին»: Մորս ասածը ինձ շատ զարմացրեց, որովհետև մենք բոլորս Ավգուստիններ ենք. ես, հայրս, հորեղբայրս՝ Քուինսին, նույնիսկ մայրս, մտածում էի ես:

— Դրա համար բոլոր պատճառներն ունես: Ես չեի մեղադրի քեզ, եթե վերցնեիր հրացանը և մեզ բոլորիս գնդակահարեիր, բացի Քուինսից ու քո որդուց: Մեզնից միայն նրանք են ձեռներեցն ու բանիմացը:

Ոչ մի բան հորս այնքան չէր կատաղեցնում, որքան որևէ բանում համաձայնվելը:

Հորեղբայրս չդիմավորեց մեզ Պենսիլվանիա կայարանում: Երբ հայրս որևէ բանից հուսախաբ էր լինում, այդ մասին ինձ ոչինչ չէր ասում:

Երբ քաղաք հասանք, ժամը մեկն անց էր, և մեզ մոտ ուտելու ոչ մի բան չկար, բացի երկու շաքարածոդիկներից: Հյուրանոց տանող ճանապարհին ինձ երկար թվաց, մայրերը՝ մի փոքր ավելի լայն, քան մեր քաղաքինը, իսկ հյուրանոցը գնալով կարծես ավելի էր հեռանում Գրանթ Սենթրալ[2] կայարանից: Երբ մտանք հյուրանոց, սպասարահում օժանելիքի սուր հոտ զգացի: Աղմինիստրատորը զանգահարեց Ավգուստ Քուինսին ու հայտնեց, որ եղբայրը եկել է: Այնուհետև մենք վերելակ նստեցինք ու բարձրացանք քսաներորդ հարկ: Մենյակում կային երեք հոգի, որոնք տարբեր գույնի կոստյումներով էին. կապույտ, գորշավուն: Երբ նրանք ոտքերն իրար վրա էին գցում, նոր արդուկված տաբատների ծալքերի արանքից երևում էին ծնրակապերը: Բոլորովին նման չէին իրար: Մեկը գանգուր բեղեր ուներ, մյուսը՝ հորս նման շիկավուն, խուճուճ հոնքեր, իսկ երրորդի ձեռքին խմիչքով լի մի բաժակ կար. երեքն էլ խմիչքով լի բաժակներ ունեին, սակայն խմելիս բաժակներն իրար չէին խփում:

— Պարոնայք, կցանկանայի, որ ծանոթանայիք իմ եղբայր Մարտինի ու նրա որդու հետ, — ասաց հորեղբայր Քուինսը:

— Տղայի անունը Ջեյ է, — ավելացրեց հայրս, ուղիղ նայեց նրանց աչքերի մեջ ու ձեռքով բարևեց յուրաքանչյուրին: Ես հետևեցի հորս օրինակին, բայց առանց ձեռքսեղմումի: Բեղավոր մարդը նայեց ինձ ու ասաց.

— Ինչո՞ւ չես բարևում ձեռքով, Ջեյ:

— Մարտին, չէի՞ք ցանկանա մի փոքր թարմանալ, — հարցրեց հորեղբայրս: —
Լոգարանը գտնվում է սենյակից դուրս, ձախ կողմի վրա:

— Շնորհակալություն Քուինս, իհարկե կուզենայինք, — պատասխանեց հայրս:

— Ներեցեք պարոնայք:

— Խնդրեմ, խնդրեմ, — ասացին նրանք:

Հայրս ու ես գնացինք ննջասենյակ: Սենյակի կահույքը քառակուսի ձև ուներ, նոր էր ու բոլորն էլ՝ միևնույն մուգկարմիր գույնի: Մահճակալի վրա մի բաց պայուսակ կար, որը նույնպես նոր էր: Թանկարժեք կաշվից ու մաքուր սպիրտային խմիչքներից եկող բուրավետ հոտն ինձ հաճույք պատճառեց: Երևում էր, որ հորեղբորս բոլոր ներքնաշորերը մետաքսից էին ու բուրում էին fleurs de-lis:[3] Լոգարանում ինձ կարգի բերելուց հետո ուզում էի գնալ հյուրասենյակ՝ միանալու հորեղբայր Քուինսին ու իր ընկերներին:

— Չգնաս, — ասաց հայրս: — Մպասենք այստեղ:

— Անքաղաքավարություն չի՞ համարվի դա, — հարցրեցի ես:

— Ոչ, հորեղբայրդ այդպես է ցանկանում:

— Հայրիկ, արի ծիծաղելի վիճակի մեջ չընկնենք: Նրանք կմտածեն, որ մեզ հետ ինչոր բան է պատահել:

— Ոչ, նա այդպիսի բան չի մտածի: Նա ինչոր գործերով է զբաղված և չի ցանկանում, որ իրեն խանգարեն: Ես գիտեմ, թե ինչպես է աշխատում եղբայրս. մեզ այստեղ ուղարկեց, որ չանհանգստացնենք իրեն:

— Հայրիկ, իրոք որ հորինողն ես, հա՛:

Բայց ես չեի ցանկանում մնալ սենյակում առանց հորեղբորս: Կարդալու որևէ բան գտնելու հույսով նայեցի շուրջս, սակայն ոչինչ չգտա, նույնիսկ մի թերթ, բացի հյուրանոցի մասին եղած փոքրիկ ու փայլուն գրքույկից: Անհամբեր սպասում էի, թե երբ պետք է գնայինք Վերմերի գիրքը գնելու: Միաժամանակ շատ էի ուզում իմանալ, թե ինչի մասին էին խոսում մյուս սենյակում նստած մարդիկ: Հետաքրքիր էր նաև, թե ինչու հորեղբայրս այդքան կարճահասակ էր, իսկ հայրս՝ այդքան բարձրահասակ: Պատուհանից դուրս կախվելով, տեսա, թե ինչպես էին լարված խաղալիքների պես փողոցում մանևրում տաքսիները:

Հայրս մոտեցավ ինձ և ասաց.

— Շատ մի կախվիր պատուհանից դուրս:

Ես մի փոքր ետ քաշվեցի ու խորը շնչեցի փողոցի թոհ ու բոհից վեր գտնվող սառը օդը:

— Նայիր այն կանաչ ավտոմեքենային, որը կտրել է դեղնագույնի ճանապարհը, — ասացի ես: — Պայտաձև շրջադարձ է կատարելու:

— ՆյուՅորքում դա սովորական բան է, հնուց եկող սովորություն, որը օրինական է համարվում այստեղ:

— Դա Կրայսլեր բիլդինգն[4] է:

— Այո, գեղեցիկ է, չէ՞: Այդ շենքն ինձ հիշեցնում է շախմատի թագուհու:

— Իսկ այն մեկը ո՞րն է:

— Չգիտեմ: Ինչոր հսկա շիրմաքար: Իսկ այն դիմացինը Վուլվորթ բիլդինգն է, որը երկար տարիներ համարվել է աշխարհի ամենաբարձր շենքը:

Մենք պատուհանի մոտ կանգնած զրուցում էինք, և ես զարմանում էի, թե նա ինչպես է կարողանում պատասխանել իմ տված բազում հարցերին: Ծնվելուցս առաջ հայրս աշխատանք փնտրելու նպատակով եղել էր ՆյուՅորքում: Այն ժամանակ նա երիտասարդ էր: Այնպես որ սա հորս առաջին ուղևորությունը չէր: Հորս նկատմամբ ունեցած հարգանքից դրդված, շատ էի ցանկանում որևէ մխիթարիչ բան ասել այդ հանգիստ, կյանքում միշտ տանջված մարդուն:

— Իսկապե՞ս կարծում ես, որ Քուինսի ակնարկը վերաբերում էր մեր այստեղ մնալուն, — հարցրեցի ես:

— Քուինսը հետևողական մարդ է, և ես հիանում եմ նրանով: Եթե նա որևէ բան է ցանկանում, ապա անմիջապես մեծ թափով ու եռանդով հետամուտ է լինում դրան: Հորեղբայրդ, քո մոր նման, ինձնից շատ ավելի հեռուն է տեսնում: Կզգաս, թե նա մտքով ինչքան առաջ է քեզնից:

Հայրս իր ձեռքերը մոտեցրեց իրար, ափերը շրջեց դեպի ներքև, վազանց կատարող տաքսիների նման ձախ ձեռքը արագ տարավ առաջ և ասաց.

— Դուք էլ եք կյանքում այդպես վարվում:

— Իհարկե, իհարկե, — ասացի ես:

Սրտնեղությանս ու շփոթմունքիս պատճառը միայն ինձ գովաբանելը չէր. զայրանում էի, որ հայրս հորեղբայր Քուինսին համարում էր նույնքան խելացի, որքան ինձ: Այդ վայրկյանից սկսած համոզվեցի, որ կյանքում միայն հիմարներն են հետաքրքրություն ցուցաբերում փողի նկատմամբ:

Վերջապես. երբ հորեղբայրս եկավ ննջասենյակ, ասաց.

— Մարտին, հույս ունեի, որ դու և որդիդ կգաք ու միանաք մեզ:

— Սատանան տանի, ինքս էլ չեի ցանկանում փակված մնալ սենյակում: Դու և քո ընկերները զբաղված էիք գործարար խոսակցությամբ:

— Լուկասը, Ռուբակը և ես: Մարտին, չկա մի բան, որ ցանկանամ թաքցնել իմ հարազատ եղբորից: Խոսքը գնում էր երկրորդական մի հարց ճշտելու մասին: Երկուսն էլ հրաշալի անձնավորություններ են, իրենց բնագավառի համար շատ կարևոր մարդիկ: Ափսոս, որ չկարողացար ավելի մոտիկից ճանաչել նրանց: Հավատա ինձ, ես ոչ մի ակնարկ չարեցի ձեր այստեղ մնալու մասին: Ինչ արած, ի՞նչ կուզենայիք խմել:

— Ինձ համար միևնույն է: Հիմա շատ չեմ խմում:

— Մարտին, վիսկի կուզե՞ս, սառույցով:

— Հրաշալի է:

— Իսկ տղան: Իմբիբի հյուսթ կուզե՞ս, երիտասարդ: Միգուցե կա՞ր խմես:

— Իմբիբի հյուսթ, — ասացի ես:

— Կար ժամանակ, որ հայրդ կարող էր երկու մարդու չափ խմել: Որքան հիշում եմ, մատուցողը խմիչք բերեց մեր համար և երբ սկսեցինք խմել, հարցրեցի, թե այստե՞ղ ենք անցկացնելու ամբողջ օրը: Հորեղբայրս կարծես չլսեց, սակայն հինգ բռպե հետո ասաց, որ միգուցե տղան ուզում է տեսնել Սիթին՝ Գոթամը,[5]նա այսպես անվանեց ՆյուՅորքը, և առաջարկեց գնալ շրջագայության: «Բաղդադը գետնուղու վրա», — ասաց հայրս ու ավելացրեց, որ իմ այստեղ կատարած շրջագայությունը մեկընդմիջտ վառ կմնա հիշողությանս մեջ: Հայրս միշտ ինձ «տղա» էր անվանում, երբ ես որևէ բանից հուսահատվում էի, հիվանդանում կամ զայրանում, կարճ ասած՝ նա վշտանում էր դրա համար: Մենք դուրս եկանք սենյակից ու վերելակով իջանք ներքև, նստեցինք տաքսի և ուղևորվեցինք դեպի Բրոդվեյ: Չգիտեմ, փողոցով վե՞ր բարձրացանք, թե՞ իջանք ներքև: Երբ Բրոդվեյում էինք, հորեղբայրս մի քանի անգամ ասաց. «Ահա թե ինչու տեղացիները Մեծ Արծաթե ճանապարհ են անվանում այս փողոցը: Ցերեկն այն բոլորովին այլ տեսք ունի»: Մեր ուղևորությունը տեսարժան վայրեր այցելելու նպատակ չուներ, քանի որ հորեղբայրս մտավ «Փիքերնաթ» ակումբ, միանման տաղավարաձև կառույցներում տեղավորված մի ռեստորան: Հիշում եմ, թե ինչպես իջանք մութ սրահ: Դաշնամուրի վրա նվագում էին «Կա մի փոքրիկ հյուրանոց» երգը:

— Նա չպետք է կատարի այդ երգը, — ասաց հորեղբայր Քուինսը: Հետո ձեռքի շարժումով դաշնամուրի մոտ նստած մարդու ուշադրությունը հրավիրեց իր վրա:

— Ինչպե՞ս ես, Ֆրեդի: Ինչպե՞ս են տղաներդ:

— Լավ են, լավ են միստր Ավգուստ, — ասաց Ֆրեդին առանց որևէ նոտա բաց թողնելու, ճոճեց գլուխն ու ժպտաց:

— Սա Քուինսի սիրած երգն է, — ասաց ինձ հայրս, երբ խարխափելով մթության միջով գնում էինք՝ նստելու սրահում դրված շրջանակաձև սեղանի մոտ, կորածն նստարանի վրա:

Լուռ էի: Հորեղբայրս նկատելով այդ, ասաց.

— Ֆրեդն առաջին կարգի մարդ է: Նրա տղան աշնանը գնալու է Քոլքեյթ:

— Ես հարցրեցի.

— Իրո՞ք դա ձեր սիրած երգն է:

Հորեղբայրս թեթևակի ժպտաց և իր տաք ու լայն ձեռքը դրեց ուսիս. այդ տարիքում ասում էի, երբ ձեռքով դիպչում էին ինձ:

— Ես այդպես եմ ցույց տալիս, — ասաց նա տարօրինակ մոմոռոցով: — Երգերն ինձ համար նման են երիտասարդ աղջիկների: Նրանք բոլորն էլ սիրունիկ են:

Կարմիր բաճկոնով մի մատուցող աճապարանքով մոտեցավ մեզ.

— Միստր Ավգուստ, — հարցրեց նա, — վերադարձե՞լ եք արևմուտքից:
Ինչպե՞ս եք, միստր Ավգուստ:

— Առանձնապես ոչինչ, Ջերոմ: Մի կերպ: Կուզենայի, որ ծանոթանայիք
կրտսեր եղբորս՝ Մարտինի հետ:

— Բարև ձեզ, միստր Մարտին: Եկել եք ՆյուՅորք այցելության՞, թե՞ այստեղ եք
ապրում:

Հայրս ձեռքով բարևեց Ջերոմին, որը ինչոր չափով զարմանք պատճառեց
վերջինիս:

— Կեսօրին եմ եկել, շնորհակալություն: Ապրում եմ Պենսիլվանիայի[6] մի
փոքրիկ գավառական քաղաքում. դժվար թե լսած լինեք նրա մասին:

— Հասկանում եմ, սրբ: Շտապ այցելություն է:

— Վեց տարվա մեջ սա իմ առաջին այցելությունն է, պարզապես
հնարավորություն ունեցա այցելել եղբորս:

— Այո, վերջին տարիներին մենք հազվադեպ ենք տեսնում նրան: Նա այնպիսի
մարդ է, որ հաճախ հնարավոր չէ հանդիպել, ճիշտ չե՞մ ասում:

Հորեղբայրս ընդհատեց նրան.

— Սա եղբորս որդին է, Ջեյը:

— Քեզ դո՞ւր է գալիս այս քաղաքը, Ջեյ:

— Հրաշալի է, — պատասխանեցի ես և, իհարկե, հորս նման ձեռքով չբարևեցի Ջեյրոմին:

— Դե ինչ կասես, Ջեյ, — ասաց հորեղբայրս: — Ես ու եղբայրս կցանկանայինք շոտլանդական վիսկի խմել, իսկ տղան՝ իմբիրի հյութ:

— Ոչ, սպասեք, — ասացի ես: — Ի՞նչ տեսակի պաղպաղակ ունեք:

— Վանիլով և շոկոլադով, սըր:

Մի փոքր վարանեցի: Հավատս չէր գալիս. մեզ մոտ, հասարակ դեղատանը պաղպաղակի տասնհինգ տեսակ կա:

— Կարծում եմ, որ դա շատ քիչ է լավ ընտրություն կատարելու համար, — ասաց Ջեյրոմը:

— Այդ դեպքում՝ վանիլինով:

— Լսում եմ, սըր: Մի բաժակ վանիլինով:

Մատուցողի բերած պաղպաղակը նման էր գուլֆի գնդակի: Այն դրված էր արծաթյա հարթ ափսեի մեջ և ուտելիս սահում էր գդալիս տակից: Հորեղբայրս նայեց ինձ և հարցրեց.

Ի՞նչ կցանկանայիր անել այստեղ:

— Տղաս ուզում է գրախանութ գնալ, — ասաց հայրս:

— Գրախանութ: Ի՞նչ գիրք կցանկանայիր գնել, Ջեյ:

— Կուզենայի աչքի անցկացնել Վերմերի որևէ լավ գիրք, — ասացի ես:

— Վերմեր, — արտասանեց հորեղբայրս դանդաղ, կարծես նրա անունը տալով բավականություն էր ստանում: — Դանիական դպրոցին է պատկանում: Այո, նա դանիացի է:

— Ըստ իս, Ջեյ, ֆրանսիացիները այնպիսի մարդիկ են, որ պետք է ծեծել նրանց: Մեզ մոտ, Չիկագոյում, հյուրանոցի հյուրասենյակում կա Դեգայի չորս դանիացի պարուհիների մի նկար: Նկարում եղած դիմանկարներից յուրաքանչյուրին կարող եմ նայել ժամերով: Իմ կարծիքով այդ նկարը հրաշալի է: Դեգան հավասարակշռության հիանալի զգացողություն ունի:

— Այո, բայց Դեգայի նկարները ձեր վրա գունավոր գծանկարների տպավորություն չեն թողնում: Կարծում եմ, նկարչությանը պայծառատես աչքով նայելիս՝ Դեգան նսեմանում է Վերմերի առաջ:

Հորեղբայր Քուինսն ու հայրս լուռ էին: Որոշ ժամանակ անց հայրս նայեց ինձ անձկալից հայացքով և ասաց .

— Ահա թե ինչի մասին են խոսում մայր ու տղա ամբողջ ժամանակ: Ես նրանց ասածներից ոչինչ չեմ հասկանում: Դա իմ գիտակցությունից վեր է:

— Մայրդ ոգևորում է քեզ, որ նկարիչ դառնաս, ճիշտ չե՞մ ասում, Ջեյ, — ասաց հորեղբայրս ու այնպես լայն ժպտաց, որ այտերը ուռեցին, կարծես բերանում կոնֆետներ լինեին:

— Ճիշտ է, կարծում եմ, այդպես էլ կա:

— Քո մայրը հրաշալի կին է, Ջեյ, — ասաց Քուինսը:

Մորս հասցեին ուղղված գովասանքը այնքան բնորոշ էր նրա «հրաշալի» էությանը, որ ես, շոյված ու շփոթված, սկսեցի քշփորել պաղպաղակս, իսկ հայրս հարցրեց հորեղբորս նրա կնոջ՝ Թեսսի մասին: Ռեստորանից դուրս գալիս հորեղբայրս բանկային չեկի վրա գրեց իր և ինչոր ընկերության անունը: Ժամը հինգին մոտ էր:

Հորեղբայրս չգիտեր ՆյուՅորքում եղած գրախանութների տեղերը, որովհետև իր կյանքի տասնհինգ տարիներն անցկացրել էր Չիկագոյում: Այնուհանդերձ, կարծում էր, որ եթե գնանք 42րդ փողոց, վեցերորդ ավենու, կարող ենք որևէ գրախանութ գտնել: Նստեցինք տաքսի, որը մեզ տարավ մի զբոսայգու մոտ: Նրա ետնամասը հանրային գրադարանի համար բակի դեր էր կատարում: Այդ տեղը հաճելի տեսք ուներ: Բակում շատ աղունիկներ կային, իսկ նստարանների վրա հանգստացող մարդկանց և ամառային պիրկ զգեստներ հագած ծառայողուհիների ներկայությունն ինձ վրա այնքան լավ տպավորություն թողեց, որ ես առանց մտածելու երկու մարդկանց առաջնորդեցի դեպի գրադարան: Եռուզեռով լի շենքերը վեր էին

խոյանում ու փայլում ծառերի կատարների միջով: Որքան ես հասկացա, դա ՆյուՅորքն էր: Փառասիրության աշտարակները սլանում էին դեպի երկինք և ասես բյուրեղանում իմ մեջ:

— Եթե այստեղ կանգնես, — ասաց հայրս, — կարող ես տեսնել Էմփայր Բիլդինգը:[7]

Ես մոտեցա հորս և նայեցի նրա ցույց տված ուղղությամբ: Հանկարծ չոր ու կարծր մի բան ընկավ աչքիս մեջ: Գլուխս իջեցրի ու թարթեցի աչքս: Այն սկսեց ուժեղ ցավել:

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց հորեղբայրս:

— Տղայի աչքի մեջ ինչոր բան է ընկել, — ասաց հայրս: — Նման բաներում նրա բախտը չի բերում, ինչքան գիտեմ:

— Օհ, — ասացի ես զայրացած, գրեթե արտասվելու աստիճան: Դեպքը կարծես մահու ու կենաց հարց լիներ ինձ համար:

— Եթե քամի չլիներ, — ասաց հայրս, — գուցե կարողանայի տեսնել, թե ինչ է պատահել:

— Մարտին, հիմա մտածելու ժամանակ չէ: Աչքի կամ ականջի նկատմամբ չպետք է այդքան թեթև վերաբերվել: Հյուրանոցը գտնվում է երկու թաղամաս այն կողմ: Ի վիճակի՞ ես երկու թաղամաս քայլել, Ջեյ:

— Ես կույր եմ, բայց ոչ կադ, — պատասխանեցի բորբոքված:

— Ճկուն միտք ունի տղադ, — ասաց հորեղբայրս:

Հորս և հորեղբորս ուղեկցությամբ ուղղվեցի դեպի հյուրանոց, ձեռքով ծածկելով դեմքս: Ժամանակ առ ժամանակ նրանցից մեկը կամ մյուսը ձեռքը դնում էր ուսիս կամ բռնում դաստակիցս, բայց ես դիտավորյալ արագացնում էի քայլերս, որպեսզի այդ բանը թույլ չտամ նրանց: Հույս ունեի, որ հյուրանոց մտնելիս ոչ ոքի ուշադրությունը չենք գրավի, դրա համար էլ ձեռքս հեռացրի դեմքիցս և ուղղաձիգ քայլեցի առաջ, աշխատելով պահպանել կեցվածս: Եթե մի աչքս փակ չլիներ ու դեմքս կարմրած, կարծում եմ, որ լավ տեսք կունենայի: Չնայած ձեռք առած ամբողջ զգուշությանս, հայրս ու հորեղբայրս ոչ մի բան չէին խնայում ինձ դավաճանելու համար: Նրանք կրնկակոխ հետևում էին ինձ, կարծես ուր որ է՝ վայր էի ընկնելու: Ավելին, երբ հյուրանոցի սպասասրահ մտանք, հայրս մի փնթփնթան ծերունու ասաց. «Խեղճ տղայի աչքը բան է ընկել», իսկ հորեղբայրս էլ իր հերթին աղմինիստրատորին խնդրեց. «Բժիշկ ուղարկեք քսանմեկերորդ հարկ»:

— Դու չպետք է բժիշկ կանչեիր, Քուինս, — ասաց հայրս, երբ մենք բարձրանում էինք վերելակով: — Հիմա կարող եմ աչքը նայել, այստեղ քամի չկա: Այսպիսի բան միշտ էլ պատահում է: Տղան շատ անզգույշ է:

— Աչքերի հետ պետք է զգույշ վարվել, Մարտին: Նրանք մեր կյանքի ամենաթանկ զենքերն են:

— Ամեն ինչ լավ կլինի, — ասացի ես, չնայած ասածիս չէի հավատում: Թվում էր՝ մետաղի կտորը խորն էր մտել աչքիս մեջ:

Երբ սենյակ մտանք, հորեղբայրս ստիպեց, որ անկողին մտնեմ: Հայրս գրպանից հանեց թաշկինակը, ծայրը ձեռքերի մեջ ոլորեց այնքան ժամանակ, մինչև որ այն

դարձավ սուր: Հետո մոտեցավ ինձ և ուզում էր թաշկինակի ծայրով հանել մետաղի փոքրիկ կտորը, բայց ես թույլ չտվեցի, քանի որ աչքս սաստիկ ցավում էր:

— Ինձ մի տանջիր, — ասացի ես, ետ քաշելով դեմքս: — Դա չի օգնի, սպասենք, հիմա բժիշկը կգա:

Հայրս նեղացավ և թաշկինակը դրեց գրպանը:

Բժիշկը թեթև ձեռք ունեցող և քչախոս մարդ էր: Չէր ձևացնում, որ ինքը ընտանիքի բժիշկ է: Նա ձախ աչքիս կոպը շուտ տվեց մի բարակ ձողիկի վրա ու սպիրալաձև գործիքի որսացող ծայրով դուրս հանեց աչքիս մեջ ընկած մետաղի կտորը: Հետո, վարակումից խուսափելու համար, երեք կաթիլ դեղին հեղուկ կաթեցրեց: Դեղը ցավ էր պատճառում ինձ, փակեցի աչքս ու հենվեցի բարձին, ուրախանալով, որ ամեն ինչ բարեհաջող վերջացավ: Երբ բացեցի աչքս, տեսա, թե ինչպես հայրս մի թղթադրամ տվեց բժշկին: Վերջինս շնորհակալություն հայտնեց ու հեռացավ: Նրա գնալուց հետո հորեղբայրս դուրս եկավ լողասենյակից:

Դե, երիտասարդ, հիմա ինչպե՞ս ես զգում քեզ, — հարցրեց նա:

— Շատ լավ:

— Մետաղի կտոր էր ընկել, — ասաց հայրս:

— Մետա՛ղ: Դե ես գիտեմ, թե ինչպես է ցավում այն, կարծես ածելու շեղբ լինի: Եվ քանի որ հիմա մեր երիտասարդը լավացել է, կարող ենք մտածել ճաշելու մասին:

— Չենք կարող Քուինս, ես գնահատում եմ քո բարությունը, բայց մենք պետք է անմիջապես վերադառնանք: Ժամը ութին ժողով ունենա, պետք է անպայման ներկա լինեն:

— Շատ ափսոս: Ի՞նչ ժողով է, Մարտին:

— Եկեղեցական:

— Դու դեռ եկեղեցական գործերո՞վ ես զբաղվում: Դե, աստված օրհնի քեզ քո բարի գործերի համար:

— Լավ բան արած կլինես, եթե մի օր, իհարկե, հնարավորության դեպքում, այցելես մեզ: Գիշերը կօթնանես մեզ մոտ: Դա մեծ ուրախություն կպատճառի կնոջս:

Հորեղբայրս մոտեցավ իր կրտսեր եղբորն ու ձեռքը դրեց նրա ուսին:

— Մարտին, աշխարհում ամենաշատ բանը, որ կցանկանայի, ձեզ այցելելն է: Հինգշաբթի օրը պետք է մեկնեն արևելք, որովհետև ժամադրված եմ: Ժամադրությունները ոչ մի բանով հանգիստ չեն տալիս: Ոչ մի բան ինձ այնքան բավականություն չի պատճառի, որքան շնորհ անել ձեր տանն ու թեկուզ մի երկու օր մնալ ձեզ մոտ: Հաղորդեցեք հարգանքներս ձեր կնոջը և ասացեք, թե ինչպիսի հրաշալի տղա է մեծացրել: Իհարկե՝ երկուսովդ միասին:

Հայրս խոստացավ, որ կասի և ավելացրեց.

— Անպայման:

Մի փոքր իրարանցումից հետո մենք մեկնեցինք:

— Երեխան լա՞վ է, — հարցրեց սպասասարահում նստած ծերունին, երբ դուրս էինք գալիս հյուրանոցից:

— Շնորհակալություն, սըր, մետաղի կտոր էր ընկել աչքը, — պատասխանեց հայրը:

Հյուրանոցից դուրս գալիս ինձ հետաքրքրում էր, թե հիմա կա՞րոյոք որևէ բաց գրախանութ:

— Մենք փող չունենք:

— Ոչ մի կոպե՞կ:

— Մեզ մոտ եղած հինգ դուլարը բժշկին տվեցինք: Ահա թե ինչ արժե ՆյուՅորքում աչքից մետաղի փոքրիկ կտոր հանելը:

— Ես այդ դիտավորյալ չարեցի: Կարծում ես, ի՞նքս զցեցի աչքիս մեջ: Չիսնդրեցի, որ բժիշկ կանչես:

— Գիտեմ:

— Չգնա՞նք որևէ գրախանութ ու տեսնենք, թե ինչ կա:

— Մենք ժամանակ չունենք, Ջեյ:

Երբ հասանք Պենսիլվանիա կայարան, իմացանք, որ հաջորդ գնացքի մեկնելուն մնացել է գրեթե երեսուն րոպե: Նստեցինք մի նստարանի վրա ու սպասեցինք: Հայրս նայեց ինձ բազմանշանակալից հայացքով և ժպտալով ասաց.

— Տղաս, հորեղբայրդ ճարպիկ մարդ է, չէ՞: Մտքով նա առնվազն երեսուն տարի առաջ է ինձնից:

— Ո՞վ:

— Եղբայրս: Նկատեցի՞ր, թե ինչպես թաքնվեց լողասենյակում՝ մինչև բժշկի գնալը: Ահա թե ինչպես են մարդիկ փող ստեղծում: Հարուստ մարդը դուլարանոցները հավաքում է այնպես, ինչպես կուլեկցիոները՝ դրոշմանիշները: Այդպես էլ գիտեի, որ նա չի վճարելու: Երբ հյուրանոցի ծառայողին ասաց, որ բժիշկ կանչի, համոզված էի, որ ես եմ վճարելու:

— Այո, բայց ինչո՞ւ նա պետք է վճարեր: Որպես հայր, դու պետք է վճարեիր:

— Ճիշտ է: Իհարկե, նա պարտավոր չէր վճարել:

Հայրս հենվեց աթոռին, հայացքը հառեց առաջ, խաչեց ձեռքերն ու կռացավ ծնկների վրա: Նրա ծնոտի մաշկը թորշոմել էր, քունքերը փոս էին ընկել: Հավանքար, խմիչքն ազդել էր:

— Ահա թե ինչու նա այդքան հարուստ է, իսկ ես՝ այսքան աղքատ —
ավելացրեց հայրս թախիծով:

Այս բոլորը զայրույթ էր պատճառում ինձ, ոչ թե նրա համար, որ ուզում էի
մեղադրել հորս, այլ իմ ցանկությունն էր՝ խելքի բերել նրան, որպեսզի ընկճված ու ծեր
չզգար իրեն:

— Իսկ ինչո՞ւ շատ փող չվերցրիր հետդ: Պետք է իմանայիր, որ կարող է պետք
գալ մեզ:

— Ճիշտ ես ասում, Ջեյ: Մենք պետք է շատ փող վերցնեինք մեզ հետ:

— Նայիր, այնտեղ՝ աջ կողմի վրա մի բաց գրախանութ կա: Եթե մենք տասը
դոլար վերցրած լինեինք. . .

— Դժվար թե բաց լինի: Նրանք պարզապես ցուցափեղկերի լույսերը չեն մարել:
Եթե բաց լիներ, դրանից մեզ ի՞նչ օգուտ: Հինգ դոլարով ի՞նչ գիրք կարող ես գնել
արվեստի վերաբերյալ. գունավոր տպագրությունը թանկ արժե: Ի՞նչ ես կարծում,
որքա՞ն արժե Վերմերի որևէ ստվարածավալ գիրքը: Ինձ թվում է՝ տասնհինգ դոլարից
ոչ պակաս, նույնիսկ գործածվածը, որի էջերը քրքրված են ու թերթերը սրճոտված:

Մինչև քաղաքից հեռանալը ես զայրացած էի և անընդհատ կոպտորեն
ընդհատում էի նրան. հորս պասիվ բնավորությունը զայրացնում էր ինձ: Երբ գնացքն
արդեն հասել էր մեր կողմերը, իմ տղայական զայրույթը հանդարտվեց: Մեր
ուղևորությունը մի տեսակ ծեսի իմաստ ունեցավ, որի ընթացքում հայրս
համբերատար տարավ ճղճղոցներս, ասածներիս միշտ գլխով համաձայնության նշան
անելով, նման այն մանկաբարձին, որն ընդունում է ընտանիքի առաջնեկի ծնունդը:
Դրանից հետո անցան տարիներ, մինչև որ ես նորից կարիք զգացի այցելել ՆյուՅորք:

Վերմեր — Յան Վերմեր Դելֆտացի (1632-1675), հոլանդացի գեղանկարիչ:

Գրանդ Սենթրալ — ՆյուՅորքի կենտրոնական մեծ կայարանը:

Շուշանի հոտ (ֆրանս.):

Կրայսլեր բիլդինգ — երկնաքեր ՆյուՅորքում . 50ական թվականներին մեծությամբ երկրորդն էր Էմփայր բիլդինգից հետո:

Գոթամ — գյուղ Անգլիայում, Նոթինգեմ քաղաքի մոտ: Ըստ լեգենդի նրա բնակիչները համարվում էին «խմաստուններ»: Հաճախ այդ գյուղի անունով են կոչում ՆյուՅորքը:

Պենսիլվանիա — ԱՄՆի հյուսիսարևելյան նահանգներից . վարչական կենտրոնը Հարիսբերգ քաղաքն է:

Էմփայր բիլդինգ — երկնաքեր ՆյուՅորքում . 40 տարի շարունակ 102 հարկանի այդ շենքը ամենաբարձր կառույցն էր աշխարհում: Շատ ամերիկացիների համար Էմփայր բիլդինգն այսօր էլ մնում է որպես «երկնաքերերի արքա»: